Թելլի-խաթունը, այդպէս էին կոչում այժմ նրան, քաղաքի ոստիկանութեան գլխաւորի կինն էր: Նրա ամուսինը կոչւում էր Լաթիֆ-բէկ: Դա այն չարագործների տեսակիցն էր, որոնց ոստիկանի պաշտօնը բաւական ընդարձակ յարմարութիւններ է ընծայում՝ իրանց անբարոյական ցանկութիւնները կատարելու: Գողերի գաղտնի ընկեր էր նա, աւազակների պաշտպան, սպանութիւնների մասնակից, մի խօսքով, հազիւ թէ քաղաքում մի որեւիցէ անիրաւութիւն գործուէր, եւ նրա մատը խառն չլինէր: Բայց միեւնոյն ժամանակ նահանգապետ փաշայի սիրելին էր նա:

Իսկ տիկինը այնքան բարոյական ուժ ունէր, որ իր քաղցր բնաւորութեամբ, խելքով ու շնորհքով, եթէ ոչ բոլորովին կարողացել էր զսպել այդ գազանին, բայց շատ անգամ յաջողւում էր նրան՝ մեղմացնել իր ամուսնու բարբարոսութիւնները: Նա միեւնոյն ժամանակ սիրելի էր իր ամոանուն: «Ի՞նչ անեմ... սովորել եմ... եթէ այն հացը, որ ուտում եմ, հառամ չլինի, չեմ կարող մարսելէ, — այդ էր լինում ոստիկանի պատասխանը, երբ տիկինը խրատում էր նրան: Նրա տան մէջ շատ անգամ կատարւում էին եղեռնական խորհուրդներ մէկին սպանելու, միւսին կողոպտելու, երրորդի տանը կրակ տալու եւ այդ տեսակ խորհուրդներ ըստ մեծի մասին վերաբերում էին քրիստոնեաներին: Եթէ տիկինը չէր կարողանում խափանել չարութիւնը, այն ժամանակ նա, իրան բոլորովին անյայտութեան մէջ պահելով, զգուշացնում էր, որտեղ որ հարկն էր, եւ չարիքի առաջն առնում էր: Այդպէս, երբ որ նա յայտնի կերպով անկարող էր ներգործել, դիմում էր գաղտնի միջոցների:

Նա թշոառ էր, նա անբախտ ամուսին էր: Բռնութեամբ յափշտակեցին նրան հայրենի տնակից, բռնութեամբ ստիպեցին նրան ուրանալ իր կրօնը, իր ազգը, նա սովորեց ատել բռնութիւնը, եւ նրա վշտացած սրտում զարգացաւ մի խուլ բողոք դէպի ամէն չարութիւն: Իր թշոառութեան գիտակցութիւնը ծնեց նրա մէջ կարեկցութիւն եւ դէպի օտարի թշոառութիւնը: Մասնաւոր, անձնական զգացմունքը ընդարձակ կերպարանք ստացաւ եւ տարածուեցաւ իր ազգայինների վրայ, որոնք միեւնոյն տառապանքների մէջն էին: Այն եղեռնական տեսարանները, որոնք շատ անգամ հանդիսանում էին նրա տան մէջ, այն անիրաւութիւնները, որոնք համարեա ամէն օր կատարւում էին իր շուրջը, աւելի եւ աւելի բորբոքում էին նրա դառն ատելութիւնը դէպի այն ազգը եւ դէպի այն կառավարութիւնը, որ այդ բոլորը մեքենայում էր: «Ես վաղուց կը թողնէի այդ տունը, ես շուտով կը հեռանայի այդ գազանների որջից, — երբեմն ասում էր նա իր եղբօրը, — բայց համբերեցի եւ մնացի, որ որքան կարող եմ, օգնեմ թշոառներին»... Նա իրան զոհել էր, ուրիշ զոհեր պաշտպանելու համար: Այդ էր միայն մխիթարում նրան: